«Կամար» բարձրակարգ գործարար համալիրի կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Կենտրոն վարչական շրջանում կառուցել «Ա» դասի բարձրակարգ գործարար համալիր: Շենքը տեղակայված կլինի Ստ. Շահումյանի անվան հրապարակում՝ լավ տեսանելի վայրում, տարածքը շրջապատված է առևտրի և սպասարկման բազմաթիվ կետերով: Կարևորելով բիզնես կենտրոնի տարածքում ավելի քան մեկ դար գործունեություն ծավալած կառույցների պատմական նշանակությունը, հարուստ ավանդույթները և դրանք պահպանելու անհրաժեշտությունը՝ կիրականացվեն այդ կառույցների վերակառուցման աշխատանքներ: Բիզնես կենտրոնը ներկայացնելու է պատմական անցյալի և ճարտարապետական նորագույն լուծումների լավագույն համադրությունը: Համալիրում կգործեն բանկային ծառայություններ, կառավարման, իրավաբանական, և հարկային բարձրակարգ խորհրդատվական կենտրոններ: Կգործեն նաև առաջնակարգ ռեստորաններ, սրճարաններ, գեղեցկության սրահ, և կստեղծվեն այլ հարմարություններ շենքի վարձակալների համար:

Տեխնիկական ցուցանիշներ	Զուտ վարձակալվող տարածքի մակերեսը կազմում է 14300 քմ, մեկ տիպային հարկի մակերեսը՝ 1400 քմ: Համալիրը հագեցած է լինելու օդորակման և ջերմաստիճանի կառավարման բարձրակարգ տեխնոլոգիաներով և էներգախնայող համակարգերով: Կներդրվի շենքի կառավարման կենտրոնացված համակարգ: Կգործի արագընթաց 7 ուղևորատար վերելակ: Նախատեսվում է ավտոմեքենաների կայանատեղ 115 մեքենայի համար, ինչպես նաև հեծանիվների կայանատեղ:
Ծրագրի ժամկետները	Կենտրոնը շահագործման է հանձնվելու 2017թ.:
Ծրագրի արժեքը	Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 36 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի՝ «Փրոփերթի Դիվելոփմենթ» ՓԲԸ կողմից: Գլխավոր կապալառու՝ MLL Industries ՍՊ ընկերություն: Ինժեներական դիզայն՝ RENCO Armestate ՍՊ ընկերություն:
Ներկա իրավիճակ	Կենտրոնի երկաթ-բետոնե հիմնակմախքի կառուցման աշխատանքներն ավարտված են: Ընթանում են երեսպատման և ինժեներական համակարգերի կառուցման աշխատանքները: